

ՏԱՍՐ ՓԱՍՏԵՐ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՇՈՒՐՉ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Այլև Քրիստիան Պետերինգ, 8.11.2020

1. Ադրբեջանը և Թուրքիան են սկսել պատերազմը:

Դեռ 2020-ի ամռանը թուրք և ադրբեջանցի զինվորականները փորձեցին մի մանյովրով գրավել Լեռնային Ղարաբաղի ինքնավար շրջանը:

Սեպտեմբերի 27-ին նրանք վերջապես սկսեցին իրենց համատեղ ագրեսիվ պատերազմը, որը ղեկավարվում էր թուրք սպաների և հատուկ նշանակության ջոկատների, ինչպես նաև Թուրքիայի կողմից Սիրիայի հյուսիսից բերված իսլամիստ վարձկանների միջոցով:

2. Լեռնային Ղարաբաղը միջազգային իրավունքի տեսանկյունից անկախ է:

Բազմաթիվ լրատվական գործակալությունների և ԶԼՄ-ների կողմից անմտորեն օգտագործված ձևակերպումը, թե Լեռնային Ղարաբաղը «միջազգային իրավունքի տեսանկյունից» պատկանում է Ադրբեջանին, պարզ սխալ է:

Ճիշտ է, որ տարածքը խորհրդային շրջանում Ստալինի ձեռքի մի հարվածով հանձնվեց ադրբեջանական ԽՍՀ-ին՝ հակառակ տեղի բնակչության կամքին:

Այնուամենայնիվ, նույնիսկ բռնապետի այս որոշման համաձայն, այն պահպանեց իր ինքնավար կարգավիճակը և հետագայում փլուզվող Խորհրդային Միությունից Ադրբեջանի դուրս գալու ժամանակ, ըստ այդ ժամանակ գործող միութենական օրենքի, իրեն հռչակեց անկախ հանրապետություն:

3. Լեռնային Ղարաբաղը և Հայաստանը ժողովրդավարական երկրներ են: Ադրբեջանը բռնապետություն է:

Լեռնային Ղարաբաղն ուղղակիորեն օրինակելի ժողովրդավարություն ունեցող երկիր է:

Մի խաղաղ հեղափոխության արդյունքում երկու տարի առաջ Հայաստանի բնակչությունը նույնպես տապալեց իր նախկին ավտոկրատական կառավարությունը և կառավարության նոր ղեկավար ընտրեց նախկին լրագրող և իրավապաշտպան Նիկոլ Փաշինյանին:

Դրանից հետո այստեղ նույնպես շատ դինամիկ կերպով զարգանում է ժողովրդավարությունը:

Բոլորովին այլ է իրադրությունը Ադրբեջանի՝ ժառանգաբար փոխանցվող բռնապետության մեջ. մամուլի ազատության համաշխարհային ինդեքսով այս երկիրն ընդամենը տասներկու տեղով է առաջ անցել Հյուսիսային Կորեայից:

Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման պահանջները

և ընդհանրապես խոսքի ազատ արտահայտումը Բաքվում ուղիղ բանտ են տանում:

Նավթի և գազի գների անկումն ավազակապետությանը հսկայական ներքաղաքական մարտահրավերների առջև է կանգնեցնում: Պետության հսկա եկամուտների գտնվելու վայրի մասին անհաճո հարցերին պատասխանելու փոխարեն կառավարությունն իր բնակչությանը շարունակ հրահրում է թշնամու դեմ. բռնապետություններին բնորոշ՝ հայտնի օրինաչափություն:

Ադրբեջանի միայն ռազմական ծախսերը համապատասխանում են Հայաստանի ամբողջ պետական բյուջեին:

4. Ադրբեջանը և Թուրքիան ռազմական ծանր հանցագործություններ են կատարում:

Այսպես կոչված հավասարակշռված տեղեկատվությունը, թե «երկու կողմերն էլ միմյանց են մեղադրում», բացահայտում է թաքնված կուսակցականությունը, մինչդեռ փաստերը պարզորոշ խոսում են այլ լեզվով: Օրինակ՝ փաստագրվել են Ադրբեջանի և նրա թուրք-սիրիական վարձկանների կողմից զանգվածային ռազմական հանցագործություններ. ռազմագերիների գնդակահարում և գլխատում, կասետային ռումբերի օգտագործում և մարտական անօդաչու թռչող սարքերով դպրոցների ու հիվանդանոցների թիրախավորված գնդակոծում:

5. Ցեղասպանության կրկնման սպառնալիք:

Միայն 1915-1916 թվականներին երիտթուրքերը Օսմանյան պետությունում սպանեցին ավելի քան 1,5 միլիոն հայերի: Դա ուղեկցվում էր քրիստոնյաների համապարփակ սեփականազրկմամբ՝ միանգամայն նման հետագայում նացիստների կողմից իրականացված հրեաների կոդոպուտին և սպանդին:

Քանի որ դրան նախորդող ու հաջորդող տարիներին ևս կոտորածների ժամանակ բազմահազար հայեր սպանվել են թուրքերի կողմից, Թուրքիայի՝ զենքով, իսլամիստ վարձկաններով և հրամանատար զինվորականներով պատերազմի մեջ մտնելը գոյության վտանգի առաջ է կանգնեցնում Հայաստանի Հանրապետության 3 միլիոն մարդկանց:

20-րդ դարում տասնյակ հազարավոր հայեր սպանվել են նաև ադրբեջանցիների կողմից:

Հանցագործների անպատժելիությունը բնութագրական էր նաև այդ զանգվածային սպանությունների համար: Ցեղասպանության միջազգային հետազոտողներն այժմ նախազգուշացնում են պատմության կրկնվելուց:

6. Հայերը հարձակման են ենթարկվում ամբողջ աշխարհում՝ նաև մեր երկրում

Ինչպես հրեաների հալածանքները, հայերի հալածանքները նույնպես երկար պատմություն ունեն:

Այս շաբաթներին նույնպես հայերի վրա նոր հարձակումներ են տեղի ունեցել. ոչ միայն Թուրքիայում, այլև նմանապես Ֆրանսիայում և Գերմանիայում՝ Քյոլնում ու Բեռլինում:

Ֆրանսիան այժմ արգելում է թուրքական «Գորշ գայլերին»՝ աջ ծայրահեղականներին, որոնք տասնյակ հազարներով կան նաև Գերմանիայում:

7. Գերմանիան կրկին ճակատագրական դեր է խաղում:

Որպես Օսմանյան պետության դաշնակից՝ գերմանական կայսրությունը կարող էր կանխել 1915-ի հայերի ցեղասպանությունը:

Գերմանիայի կանցլեր Թեոբալդ ֆոն Բեթման Նոլվեգը, սակայն, գիտակցաբար թողեց հայերին ոչնչացնել. «Մեր միակ նպատակը մինչև պատերազմի ավարտը Թուրքիային մեր կողքին պահելն է՝ անկախ նրանից, թե հայերը դրա հետևանքով կոչնչանան, թե ոչ»:

Տեղահանություններին մասնակցում էին գերմանական կայսրության զինվորները:

Մերկելի կառավարության կողմից Թուրքիայի հետ փախստականների համաձայնագրին հավատարիմ մնալը 105 տարի անց այն հետևանքն ունի, որ արգելափակված են Թուրքիայի դեմ պատժամիջոցները, որոնք երկար ժամանակ պահանջում էին այնպիսի երկրներ, ինչպիսին է, օրինակ, Կիպրոսը:

Գերմանիան, այսպիսով, կրկին հավատարմորեն կանգնած է հանցագործների կողքին:

8. Գերմանիայում ցեղասպանության մասին իմացությունը բացակայում է:

Եթե Գերմանիայում քաղաքացիները, լրագրողները և քաղաքական գործիչներն ավելի շատ տեղյակ լինեին աշխարհի ամենահին քրիստոնյա ժողովրդի հանդեպ Գերմանիայի մեղքի մասին, ապա նրանք չէին բավարարվի սպառնացող զանգվածային սպանող մակերեսային կերպով իբրև՝ «պատերազմ Կովկասում» բնութագրելով: Խնդիրը վերաբերում է մի երկրորդ ցեղասպանության:

Այն դեռևս կարող է կանխվել: Այնուամենայնիվ, գերմանական դպրոցներում նույնիսկ հայերի առաջին ցեղասպանությունը չի դասավանդվում՝ Թուրքիայի հաջողակ

քաղաքական ազդեցության և ակնհայտորեն նաև թուրք ուսանողների ու նրանց ծնողների արձագանքներից անհանգստանալու պատճառով:

Ֆրանսիան, Հունաստանը, Կիպրոսը և Սլովակիան պատժի են ենթարկում ցեղասպանության ժխտումը: «20-րդ դարի առաջին ցեղասպանության» (Ֆրանցիսկոս Պապ) մեջ Գերմանիայի մեղսակցության համատեքստում վաղուց ժամանակն է, որ համապատասխան օրենք ընդունվի նաև Գերմանիայում:

9. Իսրայելն անփառունակ դեր է խաղում պատերազմում:

Այն, որ հայկական դպրոցները, մանկապարտեզները և հիվանդանոցները հողին են հավասարեցվում ինչպես թուրքական արտադրության, այնպես էլ Իսրայելից բերված անօդաչու թռչող սարքերով, դարձել է քննարկումների թեմա: Ետնախորքում Իսրայելի սերտ հարաբերություններն են Ադրբեջանի՝ որպես կարևոր նավթամատակարարի և Իրանի դեմ գործողությունների տարածքի հետ:

Այս կախվածության հիման վրա կարելի է հասկանալ, թե ինչու Իսրայելը մինչ օրս նույնիսկ հայերի ցեղասպանությունը չի ճանաչում, անհանդուրժելի մի իրավիճակ՝ նաև շատ իսրայելցիների համար, որը մի նոր կառավարության օրոք հնարավոր է շտկել:

10. Լրատվամիջոցները և քաղաքականությունը ձախողվում են:

Հանրային հեռարձակողների և տպագիր լրատվամիջոցների աղքատիկ տեղեկատվությունը, փոքրաթիվ բացառություններով հանդերձ, ոչ ճիշտ է և սխալաշատ (տե՛ս թիվ 2-ը): Հարձակվողների անհիմն հակամեղադրանքների՝ չստուգված ընդունումով այն կասկածի տակ է դնում փաստերը (տե՛ս թիվ 4-ը) և այդպիսով օրինականացնում է դաշնային կառավարության անգործությունը: Հայերի կոտորածներով ուղեկցվող նոր շրջանի պատմության վրա՝ մինչև իննսունական թվականները, հարձակվողների ռազմական գերազանցության և Ռուսաստանի տարակուսելի դերակատարության վրա նետված համառոտ հայացքը ցույց կտա հայ ժողովրդի փաստացի գրկանքները:

Արևմուտքի ուժեղ պատժամիջոցները և ՆԱՏՕ-ից Թուրքիայի՝ արդեն իսկ ուշացած վտարումը կարող էին դեռ անցած շաբաթներին հազարավոր մարդկային կյանքեր փրկել: Առանձնապես Գերմանիայի՝ որպես ցեղասպանության հանցակցի և պատժամիջոցները խոչընդոտողի մեղքն ամեն օր ավելանում է:

Հրապարակվել է «<https://www.ereporter.de/politik/zehn-fakten-zum-krieg-um-bergkarabach>»-ում